ՀրազդանիՎիլյամՍարոյանի անվան N11 հիմնական դպրոց

2023-2024 ուս. տարի

Դպրոցի տնօրեն՝ Քնքուշ Լևոնյան

Շախմատի ուսուցիչ՝ Գոռ Գալստյան
(1-ին կարգի մարզական որակավորում,մրցավարական որակավորում, հանրապետական և միջազգային վարկանիշ)

Խմբակի ծրագիր

«Պատանի շախմատիստ»

Կրթական աստիճան, սովորողների տարիքային խումբ / դասարան

1-ին աստիճանի՝ տարրական / 2014-2016թթ.տարիքային խումբ, 2-4-րդ դասարաններ

Ժամաքանակ

64 ժամ

Բացատրագիր

Շախմատի արտադպրոցական խմբակը դպրոցական կրթությունից զատ նպաստելու է սովորողների զարգացմանը, ինքնակրթմանը, բնավորության ձևավորմանը և ազատ ժամանակի արդյունավետ օգտագործմանը: Օգնելու է, որպեսզի սեվորողները իմանան ընդհանուր տեղեկություններ շախմատի պատմության և կանոնների մասին: Կարողանան առանց թերությունների, գրագետ շախմատ խաղալ, լուծել և վերլուծել շախմատային վարժություններ և խնդիրներ:

Խմբակի գործունեության արդյունքում զարգանալու է սովորողների՝ հանրակրթական պետական չափորոշիչով կրթական 1-ին աստիճանի համար սահմանված վերջարդյունքներից բխող հետևյալ կարողությունները.

-դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին.

-հասկանա իր առջև դրված խնդիրը, մշակի և կատարի քայլեր այն լուծելու համար.

-օգտվի պարզ թվային սարքերից, համակարգչային ծրագրերից, հավելվածներից, աջակցող սարքերից և սարքավորումներից, կարողանա օգտագործել դրանք՝ պահպանելով անվտանգության կանոնները.

-համատեղ կամ ինքնուրույն իրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, անի եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործի իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնի ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով:

Նպատակները

1. Ներկայացնել շախմատի ընդհանուր պատմությունը, զարգացումը, կանոնները, սկզբնախաղը և մարտավարական տեսակները։

2.Ձևավորել և զարգացնել բազմատարբերակային և հաշվարկային մտածողությունը, տեսողական հիշողությունը։Տարբեր մատային գրոհների իրականացման հմտությունները։

3. Նպաստել սովորողների մեջ դրական անձնային որակների զարգացմանը, այդ թվում ինքնուրույնության, ինքնավերահսկման, ինքնակրթության ձևավորմանը։

4. Արժևորել համագործակցությունը, կանոնների կիրառումը, օրինաչափությունների ընկալումը։

Վերջնարդյունքները

Խմբակի անդամները կկարողանան՝

1.Առանց թերությունների խաղալ շախմատ.

2.լուծել և վերլուծել շախմատային խնդիրը.

3.գրանցել խաղաքարերի քայլերը և խնդիրների լուծումները.

4.կիրառել մարտավարական գիտելիքները

5.իմանա շախմատի պատմությունը և կանոնները։

Ծրագիր / թեմատիկ պլանավորում

Հ/Հ	Բովանդակություն	Նպատակ	Ժամաքանակ	Նշումներ
1	Շախմատի ընդհանուր պատմությունը	Ներկայացնել շախմատի ընդհանուր պատմությունը, զարգացումը:	1	
2	Շախմատ խաղի կանոնները և պարկեշտությունը	Ներկայացնել շախմատի խաղի կանոնները, նպաստել պարկեշտության ձևավորումը:	2	
3	Շախ, մատ, կրկնակի շախ	Ձևավորել սովորողների մոտ շախ, մատ և կրկնակի շախ կատարելու հմտություններ:	2	
4	Ոչ- ոքիի տեսակներ, Հավերժական շախ	Ներկայացնել ոչ-ոքիի տեսակները և հավերժական շախը:Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրների լուծմամբ:	2	
5	Քայլերի գրանցում	Ներկայացնել խաղի ընթացքում ճիշտ գրանցել քայլերը:	2	
6	Պայմանական նշաններ	Ներկայացնել պայմանական նշաների օգտագործումը քայլի գրանցման ժամանակ:	1	
7	Շախմատային խաղի փուլերը	Ձևավորել սովորողների մոտ խաղի փուլերի պատկերացումները:	1	
8	Մատ միայնակ արքային ծանր ֆիգուրներով	Նպաստել սովորողներին ստեղծել ստեղծագործական միջավայր՝ ձևավորել ծանր ֆիգուրներով մատ	2	

		անելու հմտությունը:		
9	Մատ միայնակ արքային թեթև ֆիգուրներով	Նպաստել սովորողներին ստեղծել ստեղծագործական միջավայր՝ ձևավորել թեթև ֆիգուրներով մատ անելու հմտությունը:	2	
10	Արքան և զինվորը՝ արքայի դեմ	Ներկայացնել արքան և զինվորը՝ արքայի դեմ խնդիրները:	2	
11	Կապ, կապի կիրառությունը	Ձևավորել բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Ձևավորել հմտությունկապ, կապիկիրառություն մարտավարական հնարքներով:	2	
12	Պատմություններ աշխարհի չեմպիոնների և չեմպիոնուհիների մասին	Ներկայացնել սովորողներին աշխարհի չեմպիոնների և չեմպինուհիների կյանքի և խաղային ոճերի մասին:	2	
13	Շրջափակում, խեղդուկ մատ	Ձևավորել բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Ձևավորել հմտություն շրջափակում, խեղդուկ մատ մարտավարական հնարքներով:	2	
14	Դաշտի ազատման կոմբինացիաներ	Ձևավորել բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Ձևավորել հմտություն դաշտի ազատման կոմբինացիաներով:	2	
15	Մրցաշարեր սովորողների միջև	Մրցակցային միջավայր ձևավորելով՝ կազմակերպել ընկերական մրցաշարեր:	2	
16	Մատային գրոհ վերջին և նախավերջին հորիզոնականներում	Ձևավորել բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Ձևավորել հմտություն մատային գրոհ	2	

		վերջին և նախավերջին հորիզոնականներում:		
17	Գրոհ փոխատեղում չկատարած արքայի ուղղությամբ	Ձևավորել բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Ձևավորել հմտություն մատային գրոհ փոխատեղում չկատարած արքայի ուղղությամբ:	2	
18	Գրոհ տարակողմ փոխատեղումների դեպքում	Ձևավորել բազմատարբերակային մտածողություն սովորողների մոտ: Ձևավորել հմտություն մատային գրոհ տարակողմ փոխատեղում կատարած արքայի ուղղությամբ:	2	
19	Թույլ դաշտեր	Ներկայացնել թույլ դաշտերը և նրանց միջոցով հարձակում իրականացնել:	2	
20	Նյութական առավելության իրացումը	Ներկայացնել նյութական առավելության կարևորությունը:	2	
21	Մրցաշարեր սովորողների, ինչպես նաև ընկերական հանդիպումներ այլ դպրոցի սովորողների միջև	Մրցակցային միջավայր ձևավորելով՝ կազմակերպել ընկերական մրցաշարեր:	4	
22	Զինվորային վերջնախաղեր	Ներկայացնել զինվորային վերջնախաղերը:	2	
23	Թագուհիներով և զինվորներով վերջնախաղեր	Ներկայացնելթագուհիներով և զինվորներով վերջնախաղերում հաղթանակի կամ ոչ-ոքիի հասնելը:	2	
24	Նավակային վերջնախաղեր	Ներկայացնելնավակային վերջնախաղերը:Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրների լուծմամբ:	2	
25	Թեթև ֆիգուրների վերջնախաղեր	Ներկայացնելթեթև ֆիգուրների վերջնախաղերը:Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրների լուծմամբ:	4	

26	Տարբեր ֆիգուրների մենամարտեր	Ներկայացնել տարբեր ֆիգուրների մենամարտերը։Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրնելի լուծմամբ։	2	
27	Թգուհին՝ նավակի դեմ	Ներկայացնել թգուհին՝ նավակի դեմ հնարքները։Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրնելի լուծմամբ։	2	
28	Նավակը՝ փղի և ձիու դեմ	Ներկայացնել նավակը՝ փղի և ձիու դեմ պայքարի հնարքները։Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրնելի լուծմամբ։	2	
29	Թեթև ֆիգուրները՝ թեթև ֆիգուրների դեմ	Ներկայացնել թեթև ֆիգուրները՝ թեթև ֆիգուրների դեմ պայքաի հնարքները։Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրնելի լուծմամբ։	2	
30	Սկղբնախաղեր և ծուղակներ	Ներկայացնել սկզբնախաղերը և մարտավարական ծուղակները։Ամրապնդել թեմայի իմացությունը խնդիրնելի լուծմամբ։	5	

Պահանջվող նյութատեխնիկական բազա

Շախմատի ցուցադրական խաղադաշտ և խաղաքարեր, սեղանի շախմատի խաղադաշտ և խաղաքարեր, շախմատի գրականություն, պատճեներ և տետրեր, շախմատի ժամացույց։

Գրականություն և ինտերնետային հասցեներ

1. Թևան Դավթյան «Սովորենք շախմատ խաղալ»

2.СергейИващенко«Chess school 1a, 1b,2,3,4»

3.Программа подготовки шахматистов Виктором Голенищев

4.«Шахматыс нуля» Вадим Мартиш

5. «Шахматы в начальной школе» И.Г. Сухин

6. «Учебник шахматной игры» Александра Костенюк

7. lichess.org, chess.com. ինտերնետային հասցեներ